



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ՅՈՒԻՍ, 2020

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 75

ԱՍՏՈՒԱԾ Է ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱԲՈՐԸ

Գոհութիւն կը յայտնենք քեզի, ո՛վ Աստուած,  
կը հռչակենք քու անունդ, եւ կը պատմենք սքանչելի գործերդ:  
«Երբոր որոշած ժամանակս գայ,  
եւ արդարութեամբ պիտի դապեմ, կ'ըսէ Աստուած:  
Երբ աշխարհը եւ անոր բնակիչները սասանին,  
եւ հաստատուն պիտի պահեմ երկրին հիմերը:  
Մնապարծներուն կ'ըսեմ.- "կը բաւէ պարծենաք".  
ամբարիշտներուն կ'ըսեմ.- "կը բաւէ հպարտանաք,  
դադրեցուցէք ձեր ամբարտաւանութիւնը, գոռոգութեամբ մի՛ խօսիք"»:  
Արդարեւ դապաստանը ոչ արեւելքէն կու գայ,  
ոչ արեւմուտքէն, ոչ հարաւէն, ոչ ալ հիւսիսէն.  
այլ՝ Աստուած է դաբաւորը, որ մէկը կը խոնարհեցնէ ու միւսը կը բարձրացնէ:  
Որովհետեւ Տիրոջ ձեռքին բաժակ մը կայ՝ բարկութեան թունդ գինիով լեցուն.  
այդ բաժակէն խմել կու տայ երկրի բոլոր ամբարիշտներուն,  
որոնք զայն պիտի քամեն իր մրուրով միասին:  
Գալով ինձի, եւ յաւիտեան պիտի ցնձամ,  
երգով պիտի ներբողեմ մեր հայրերուն Աստուածը:  
Ամբարիշտները իրենց ամբողջ հպարտութեամբ պիտի խորտակուին,  
մինչ արդարները զօրութենէ զօրութիւն պիտի բարձրանան:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

## ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

47-49 ԳԼՈՒԽ

### ՓՂՇՏԱՅԻՆ ԵՐՈՒՄ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ (47:1-7)

Ահա կարգը կը հասնի փղշարացիներուն, որպէսզի անոնք ալ կտորորուին: Հերաքրքրական է հետեւեալ արտայայտութիւնը. «Ով Տիրոջ սուրը, մինչեւ ե՛րբ հանդարտ պիտի չկենաս: Քու պատեանդ դարձիր, հանգչէ ու լռէ: Ի՛նչպէս կրնայ հանդարտ կենալ. երբ Տէրը անոր հրամայեր է» (6-7 հմբ): Սուրը իր գործը պիտի կատարէ մինչեւ իր աւարտը: Տէրը Իր Դատաստանը պիտի փեսնէ մինչեւ որ ամէն ինչ իր աւարտին հասնի:

### ՄՈՎԱԲԻՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ (48:1-47)

Կարգը հասաւ Մովաբին: «Մովաբ ալ պիտի չպարծենայ» (2 հմբ): Ինչ բանով որ կը պարծենար Մովաբ պիտի կործանի: «Քու գանձերուդ ու գործերուդ ապաւինելուդ համար դուն ալ պիտի առնուիս» (7 հմբ): Քամովար Մովաբացիներուն չաստուածն էր, որուն համար Տէրը կ'ըսէ. «Գերութեան պիտի երթայ, իր գուրմերով ու իր իշխաններով մէկտեղ»: Այս բոլորը ցոյց կու տան, թէ ինչ բանի որ կ'ապաւինի Մովաբ պիտի կործանի: Միւս կողմէ, նաեւ Տէրը կը զգուշացնէ, որ եթէ երբեք յանկարծ ան, որ իբրեւ գործիք կը գործածուի Աստուծոյ Դատաստանը փեսնելու համար, «Ով որ Տիրոջ գործը նենգութեամբ կատարէ անիծեալ ըլլայ» (10 հմբ): Ահա «Մովաբին եղջիրը կտորուցաւ ու բազուկը բեկանուցաւ» (25 հմբ): Խորհրդանիշ է Մովաբի ոյժին, որ այդ ոյժը չկայ այլեւս: Այս մարգարեական պատգամները նաեւ կը կարդանք Եսայի մարգարէի գրութիւններուն մէջ 24:17-18: Մովաբը ի փես յարձակումին ու կտորածին կ'ուզէ ապաւինիլ Եսեբոնին, որ սակայն, Տէրը կ'ըսէ, հոնկէ ալ կրակ դուրս պիտի գայ: Այս պարագային եւս, հակառակ գալիք կտորածին, Տէրը խոստում մը կու տայ, «Մովաբը գերութենէ պիտի դարձնեն»: Արտայայտութիւն մըն է, որով ցոյց կու տայ Աւերարանի քարոզչութեամբ հեթանոսներու դարձը:

### ՏԻՐՈՋ ԴԱՏԱՍԱՆԸ ԱՄՄՈՆԻՆ (49:1-6)

Ամմոնացիներու պարագային ալ անոնց չաստուածը Մեղքոմն է, որ դարձեալ գերութեան պիտի փարուի իր քուրմերովն ու իշխաններովը: Ան ալ ապստամբ ու հպարտացող, գանձերուն ապաւինող, եւ հողորտացող, ըսելով. «Իմ վրաս ո՛վ կրնայ գալ» (5 հմբ): Ամմոնացիներու պարագային ալ, ինչպէս Մովաբի պարագային, աւարտին Տէրը դարձեալ խոստում մը կու տայ ըսելով. «Ամմոնին որդիները գերութենէ պիտի դարձնեն» (6 հմբ): Այս բոլոր կտորածները ցոյց կու տան, որպէս առիթ ապաշխարութեան, դարձի ու անդրադարձի, որպէսզի մեղաւոր, ամբարիշտ, հպարտ մարդ արարածը դարձի գայ ու Տէրը զինք փրկէ գալիք Դատաստանէն:

### ՏԻՐՈՋ ԴԱՏԱՍԱՆԸ ԵՂՈՎՄԻՆ (49:7-22)

Իսկ գալով Եղովմին, որ կը հպարտանար իր իմաստութեամբ ու հանճարով, այդ բոլորը պիտի կորսուին, որովհետեւ անոր վրայ ալ Աստուծոյ դատաստանը պիտի հասնի: Տիրոջ դատաստանը կրնայ ըլլայ, որ ուշանայ կամ ուշացած սեպեն շարերը, չնայած այդ ուշացումը Առաքեալը կը նկատէ որպէս առիթ, բայց ահա յստակօրէն ցոյց կը փրուի ըսելով. «Ահա անոնք, որ բաժակը խմելու պարտաւոր չէին, անշուշտ պիտի խմեն. իսկ դուն բոլորովին անպարիժ պիտի մնաս: Անպարիժ պիտի չմնաս, հապա անպարճառ պիտի խմես» (12 հմբ): Այսփեղ բաժակը Աստուծոյ բարկութեան, դառնութեան բաժակն է: Անոնք որ բաժակը խմելու պարտաւոր չէին, այս պարագային Աստուծոյ ժողովուրդը, որ սակայն, անոնց անհնազանդութեան պարճառով պիտի խմեն, իսկ Եղովմի պարագային անոր չարութեան պարճառով անպարճառ պիտի խմէ:

### ՏԻՐՈՋ ԴԱՏԱՍԱՆԸ ԴԱՄԱՍԿՈՍԻՆ (49:23-27)

Ահա Դամասկոսի վրայով մարգարէութիւն, որուն նաեւ պիտի հասնի Աստուծոյ Դատաստանը: «Ինչպէս լքուցաւ երեւելի քաղաքը, ուրախութեան քաղաքը» (25 հմբ): Ահա այս բոլորը կրնան պարտաւոր ալկոնարթի մը մէջ, ինչպէս պիտի ըսէ Քրիստոս անմիտ հարուստին առակով. «Այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի առնուի»:

### ԿԵՂԱՐԻ ՑԵՂԻՆ ԵՒ ՀԱՍՈՐ ԶԱՂԱՔԻՆ ԴԱՏԱՍԱՆԸ (49:28-33)

Կեղարի ցեղը, ընդհանրապէս Իսմայէլի սերունդէն սեռած քնչուներն են, պէտուները, վրաններու փակ ապրողները: Անոնք ալ ենթակայ պիտի ըլլան Աստուծոյ ծրագրին, որ կը պարտաւորուի: Ահա կոչ կ'ընէ կարծէք Նաբուգոդոնոսոր թագաւորին, թէ ելիր գնա յարձակիր ու կտորէ եւ ունեցածը յափշտակէ: Զարմանալի է երեւոյթը, ու մանաւանդ փրուած պատգամը, որ կարծէք անհարիր է ամբողջ Աստուածաշունչ Մատեանի

դրուածքին, որովհետեւ յաճախ մեր սպասումն ու ակնկալութիւնը այն է որ Տէրը, որ բարի է ինչպէս կրնայ այսպիսի թելադրութիւններ կամ ծրագիրներ ունենալ: Բայց այս բոլորին մէջ պէտք է տեսնել Աստուծոյ ծրագիրը ոչ որպէս պարզապէս կոտորած, այլ որպէս կոչ ու ահագանք սպաշխարութեան, այլ խօսքով՝ դարձ դէպի ճշմարիտ Աստուածպաշտութիւն: Որովհետեւ այս ցեղերն ու ազգերը կ'ապրէին օտար չաստուածութիւններու պաշտամունքով: Ահա ճիշդ այս էր դերն ու պարականութիւնը Իսրայէլի ժողովուրդին ըլլալու Աստուծոյ խօսնակը, Աստուծոյ վկան այդ ցեղերուն եւ ժողովուրդներուն կեանքին մէջ, բայց չեղաւ, ընդհակառակը ան ընդօրինակեց անոնց կենցաղն ու սովորութիւնները:

### **ՏԻՐՈՋ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՂԱՄԻՆ (49:34-39)**

Ըստ մասնագէտներուն Եղամը կը ճանչցուի որպէս Պարսկաստանը, որ ինք եւս իր բաժինը պիտի ունենայ Աստուծոյ Դաբաստանին, որմէ յետոյ Եղամի պարագային ալ գերութենէ պիտի դարձնեն կ'ըսէ Զօրքերու Տէրը: